

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ / ՄՈՂՈՒԼ 3/**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ
ԱՄԲԻՈՆ	ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՂՈՒԼ	ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ / ՄՈՂՈՒԼ 3/
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՄԻՉ ԵՎ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	2211B4/09.3 /3 մոդուլ/
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Թարգմանչական գործ՝ անգլերեն-հայերեն
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ	Ուսանողների մոտ զարգացնել հաջորդական և համընթաց թարգմանություն կատարելու հմտություններ և ուսուցանել որոշ կարևոր և արդիական մասնագիտական ոլորտների բառապաշար:
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<ul style="list-style-type: none"> • ԳԻՏԵԼԻՔ լեզվական միջոցների ընտրություն բանավոր թարգմանության համար: *Հաղորդվող նյութի առավելագույնս ճիշտ թարգմանելու՝ առանց փաստերը խեղաթյուրելու: • ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ *Ճիշտ կողմնորոշվելու տեքստի ոճի, բառապաշարի, ոճական միջոցների մեջ (ասացվածքներ, թևավոր խոսքեր և այլն)՝ հստակ թարգմանություն անելու համար: *Կատարելու ճիշտ և անկաշկանդ թարգմանություն: *Արագ մտածելով՝ փոխվելու մի լեզվից մյուսը, հատկապես համընթաց թարգմանության ժամանակ: • ՀՄՏՈՒԹՅՈՒՆ *Ուսումնասիրված մասնագիտական ոլորտի բառապաշար: *Թարգմանչի ձիրքին և հմտություններին, այն է՝ երկկողմ ուշադրություն, լեզվական միջավայրում արագ կողմնորոշվելու հմտություն, հստակ արտասանություն, խոսողի ոճը պահպանելու ունակություն:
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ	<ul style="list-style-type: none"> • ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 3 • ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԺԱՄ - 33 • ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ - 33 • ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ - 3
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ	Երրորդ կուրսում ձեռք բերված գիտելիքներ բանավոր հաջորդական և համընթաց թարգմանության կարողություններ և հմտություններ:
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ	Բացատրություն, անգլերեն տեքստի ընթերցում հայերեն հաշվելով, հաջորդական ընթերցում «ձնագնդի» մեթոդով, պրիզմա, Վենի դիագրամ, «մտածող գլխարկներ», էլքի քարտերի լրացում, թարգմանություն թղթից, լսողական թարգմանություն, համընթաց և հաջորդական թարգմանություն:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1. Տնտեսագիտության ոլորտի բառապաշար՝ տնտեսության զարգացման փուլերը, ճգնաժամային փուլերը, բանկային գործարքների ձևերը և փաստաթղթերը, արդյունաբերական ոլորտի բառապաշար, միջազգային տնտեսական զարգացում, միջազգային ֆոնդային բորսաներ, տնտեսական կազմակերպություններ, խոշոր կոնցերններ :

Թեմա 2. Մշակույթի ոլորտի բառապաշար՝ ընդհանուր մշակույթ, առանձին ժողովուրդների, ազգերի, էթնիկ խմբերի մշակույթներ, կինոարվեստ, թատրոն, գրականություն և այլն:

Թեմա 3. Լրատվական ոլորտի բառապաշար՝ լրատվությանը բնորոշ բառապաշար, բայի ժամանակաձևեր, նորությունների հաղորդման ոճը, հակիրճությունը, հարցազրույցների բառապաշարն ու կոնտեկտությունը:

Թեմա 4. Համակարգչային և բարձր տեխնոլոգիաների ոլորտի բառապաշար՝ համակարգչային բառապաշարի և հապավումների առանձնահատկությունները, նույնությամբ (միջազգայնորեն ընդունված ձևով) մյուս լեզուներ փոխադրելը (ֆեյսբուք, բլոգ, լոգին):

Թեմա 5. Բժշկության և բիոտեխնոլոգիաների ոլորտի բառապաշար՝ վերջին տարիներին բժշկության զարգացման և բիոտեխնոլոգիաների կիրառման հետ ծնունդ առած նոր բառեր, երեվոյթների և հիվանդությունների անվանումներ (իմպլանտանտ, կլոն, տրանսպլանտացիա):

Թեմա 6. Տիեզերագնացության և աստղագիտության ոլորտի բառապաշար՝ մոլորակների անուններ, աստղագիտական տերմիններ (զենիթ, նադիր, պարսեկ), աստղագուշակի նշաններ և այլն:

Թեմա 7. Սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտի բառապաշար՝ մարզաձևերի, մարզիկների, դատավորների, մարզագույքի անունները, մարզական նորությունների, խաղերի մեկնաբանման ոճն ու բառապաշարը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԿԱՆ

А.П. Миньяр-Белоручева, К.В. Миньяр-Белоручев. Английский язык. Учебник устного перевода. Часть 2. Изд. «Экзамен», Москва, 2008

ԼՐԱՑՈՒՑԻՉ

Линн Виссон. Практикум-1 по синхронному переводу с русского языка на английский(с аудиоприложением). «Р. Валент»,2008

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Գրավոր ստուգողական աշխատանք
Անհատական աշխատանք
Եզրափակիչ քննություն

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ
ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1.- 10%(հաճախումներ)
2. Բաղադրիչ 2.- 30%(ընթացիկ ստուգում)
3. Բաղադրիչ 3.- 40% (անհատական աշխատանք)
4. Բաղադրիչ 4.- 20%(ընթացիկ ակտիվություն):
Ընթացիկ ստուգումներ.
Նախատեսված է միջկիսամյակային գրավոր աշխատանք՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 6 հարց՝ 10-10-20-20-10-30 միավորային արժեքով: Դրանք են՝ I. Տալ արտահայտությունների անգլերեն զուգահեռները(10); II. Լրացնել նախադասությունները համապատասխան թեմատիկ բառերով(10); III. Փոխել նախադասություններն ըստ ժամանակաձևի (20); IV. Թարգմանել տրված անգլերեն և ռուսերեն արտահայտությունները (10); V. Տալ տրված ռուսերեն հոդվածի ազատ թարգմանությունը(20): VI. Թարգմանել տրված անգլերեն տեքստը(30): Կա նաև անհատական աշխատանք, որը

բաղկացած է 2 մասից՝ թարգմանություն անգլերենից ռուսերեն և ռուսերենից անգլերեն, համապատասխանաբար 40 և 60 միավորային արժեքով: Առաջադրանքների ծավալը կազմում է նվազագույնը 2-2.5 A4 ֆորմատի էջ: Տեքստերը հիմնականում տեղեկատվական բնույթի են: Դասընթացն ավարտվում է բանավոր քննությամբ: Քննաթերթիկը պարունակում է 3 հարց՝ I. Տալ տրված ռուսերեն հոդվածի ազատ թարգմանություն; II. Թարգմանել տրված անգլերեն տեքստը հայերեն; III. Խոսել տրված թեմայի շուրջ: Գնահատման առավելագույն արժեքն է 100 միավոր՝ համապատասխանաբար 30,30,40: Միավորների քայլը 5 է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՍԱՆԴՂԱԿ

<i>Գնահատման բազմաբաղադրիչ համակարգ</i>	<i>Տառային գնահատական</i>	<i>Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը</i>	<i>ԳՊՄԻ գնահատական</i>
	A+	5+	96_100
	A	5	91_95
	A-	5-	86_90
	B+	4+	81_85
	B	4	76_80
	B-	4-	71_75
	C+	3+	66_70
	C	3	61_65
	C-	3-	40_60
	D	2	Մինչև 39

ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձայնագրությունների լսում և թարգմանում՝ մեթոդների կիրառմամբ:

Հ/Հ	Թ Ե Մ Ա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Unit 9. Macroeconomics.		3					
2.	Unit 9. Great economists. Economic terms.		3					
3.	Unit 10. World economy.		3					
4.	Unit 10. Economic dependence of countries.		3					
5.	Unit 11. Mass culture.		3					
6.	Unit 12. Mass media.		3					
7.	Unit 13. Information society.		3					
8.	Unit 14. Biotechnology.		4					
9.	Unit 15. Conquering space.		4					
10.	Olympic games.		4					
Ընթացիկ ստուգում 1								4
Ընթացիկ ստուգում 2/ ներկայացում								4
Ամփոփիչ ստուգում								6
Ընդամենը								90